Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հոկտեմբերի 25-ի N 1341 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԱԾՐԱՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված չափման միջոցների և չափածրարված արտադրանքի վերաբերյալ մաքսային մարմինների կողմից չափագիտության լիազոր մարմնին տեղեկատվություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված չափման միջոցների՝ Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) 8423, 9011 (բացառությամբ 9011 90), 9012 (բացառությամբ 9012 90), 9014 (բացառությամբ 9014 90 000), 9015 (բացառությամբ 9015 90 000), 9016 (բացառությամբ 9016 00 900), 9017 (բացառությամբ 9017 90 000), 9018, 9022 (բացառությամբ 9022 90), 9024 (բացառությամբ 9024 90 000), 9025 (բացառությամբ 9025 90 000), 9026 (բացառությամբ 9026 90 000), 9027 (բացառությամբ 9027 90 500, 9027 90 800), 9028 (բացառությամբ 9028 90), 9029 (բացառությամբ 9029 90 000), 9030 (բացառությամբ 9030 90), 9031 (բացառությամբ 9031 90), 9032 (բացառությամբ 9032 90 000) ծածկագրերի վերաբերյալ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրվում է յուրա-

քանչյուր ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 20-ը՝ էլեկտրոնային եղանակով և (կամ) թղթային կրիչով՝ համաձայն ձևի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՉԱՓՄԱՆ ՄԻՁՈՑՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԱԾՐԱՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ

NN ը/կ	Արտադրանքի անվանումը	Արտադրանքի արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագիրը	Արտադրանքի քանակը (ծավալը)	Արտադրանքն արտադրող (արտահանող) երկիրը	Արտադրանք տեղափոխող անձի անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու (բնակության) վայրը	Հարկ վճարողի հաշվառման համարը	Մաքսային հայտարարագրի համարը

Տեղեկատվությունը ներկայացրեց

_____

_____

_____

(գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն՝ առկայության դեպքում)

Ղեկավար _____ _____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը, ամիսը, ամսաթիվը,տարեթիվը)

Ստացող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Մհեր Մկրտչյան 5